

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ ՍԵՐՆԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ.

(Շ-ր-ն-ի. Ա-ր-տ 1886. Բ. Թ.)

Գ.

Գերմանացւոց բժիշկները. ինչպէս մենք արդէն ասացինք, առաջինը եղան, որ ճանաչեցին այդ պատերազմի կարեւորութիւնը և մատնացոյց եղան շատ աւելորդ ուսանելի առարկաների և դասաժամերի անկարգ դասաւորութեան վերայ Գերմանացւոց դպրոցներում. Բայց մանկավարժները նոցա պատասխանեցին, թէ մանկավարժութիւնն բժիշկների գործ չէ և շարունակեցին վարուել հին կերպով. Չկարողանալով սահմանի տակ դնել ուսանելի առարկաների և պարապմանց ժամերի թիւը. բժիշկները կարեւոր համարեցին փոխել իւրեանց պատերազմական գործողութեանց նախագիծը. նոքա սկսան յարձակուիլ ոչ թէ դասատուութեան եղանակի վերայ, այլ կողմնակի պատերազմի մէջ մտան, ընդդէմ դպրոցների կազմութեան մասնաւորութեանց. նոքա յարձակուեցան այն բոլոր բաների վերայ, որ չէին վերաբերում մենակ մանկավարժներին, այլև դպրոցի ուրիշ հիմնագիծներին. նոքա ձեռնամուխ եղան այն բոլոր բաներին, որոց մէջ իրաւանց տէր չէին կարող համարուել միայն մանկավարժները. դասատուները, տեղանքի իշխանները, զինվորները և սոցա նման առարկաներն եղան այն նշանակէտերը, որոց վերայ ուղղեցին բժիշկները իւրեանց զէնքերը. Այս դէպքում ահա, պատերազմը ունեցաւ իւր նպատակայարմար արդիւնքները. մանկավարժները ստիպուած քայլ առ քայլ յետ քաշուեցին և թողին թշնամեաց ձեռքին իրանց ի վաղուց հետէ խլած տեղը, և այս կերպով ահա թողին մուտք գործելու դըպրոցի մէջ և մանկավարժական աշխարհին անծանօթ մարդկանց, Բժիշկներին էլ հենց այդ էր հարկուոր. կանգնելով մի անգամ ամուր ռոտերով թշնամու հողի վերայ, նոքա կարող էին արդէն հանգիստ կերպով շարունակել իրանց պատերազմական գործողութիւնները.

Ամենից առաջ նոքա ձեռք զարկին նոյն իսկ դպրոցների ղետեղման հետազօտութեանը, որովհետև մարդուս առողջութեան վերայ բնակարանը շատ մեծ ազդեցութիւն է գործում. Թաց կամ սաւառիկ չոր օդը, աւելորդ ցուրտը կամ աւելորդ տաքութիւնը, բնակարանի փակուած և հեղձուցիչ օդը, այս բոլորը ունին մարդոց համար շատ մեծ նշանակութիւն. Այս փաստերը վաղուց յայտնի են և ընդունուած, սակայն մինչև այժմ այս բոլոր պայմանների վերայ շատ քիչ ուշադրութիւն են դարձրել մանկավարժները և այն անձինք, որք պարապել են դպրոցների կառուցմամբ.

Աւելորդ է ասել, որ ֆրանսացւոց, անգղիացւոց, գերմանացւոց կամ ռուսաց գիւղական դպրոցներում սովորող տղէտ դասակարգի որդիք քիչ չեն վնասուել, դժուր ամբիտով լիքը խրճիթներում, դէջ և նեխեալ որջե-

բուժ գետեգուող դպրոցից օրուայ մեծ մասը այդպիսի տեղերում անցնելով, մանուկները անպիտան օդ էին շնչում, նոցա հագուստը ենթարկվում էր գոլորշիացման, նոցա մարմինը կամ ցրտից դողդողում էր և կամ տաքութիւնից թուլանում. այս բոլորը չէին կարող շնորհործել նոցա կազմուածքի վերայ: Բայց գիւղական դպրոցը իւր աղքատիկ միջոցներով չէր կարող, մեծ մասամբ, կատարել առողջապահութեան պահանջները մինչև անգամ և այն ժամանակ, երբ այդ պահանջները յայտնի էին նորա հիմնադիրներին, վերջիններին մնում էր կամ մի կերպ մի դպրոց կառուցանել կամ բոլորովին լոստաւորութեան գործում. և իհարկէ մենք չենք մեղադրիլ, որ նոքա մի որեւիցէ կերպով դպրոց էին կառուցանում:

Բայց բոլորովին ուրիշ բան են քաղաքական դպրոցական մեծ շինութիւնները: Այստեղ կայ նիւթական միջոց, որով դպրոցը պէտքէ չիանգարէ ապագայ սերնդի առողջութիւնը. սակայն անկրթութիւնն ու անհոգութիւնը մանկավարժներին այն օրին հասցրին, որ սոքա երբէք հոգատարութիւն չունեցան հսկելու, թէ արդեօք լաւ են շինուած դասատանց սենեակները, մաքուր է նոցա միջի օդը, բաւական է արդեօք այդ օդը ուսանողների բոլոր մասի համար. որոց վիճակուած է մնալ քաղաքական դպրոցներում աւելի երկար ժամանակ, քան թէ գիւղական դպրոցներում սովորողներին. մինչև անգամ երբեմն մանուկները բնակվում են քաղաքական դպրոցներում, և այս կերպով դպրոցը ներգործում է նոցա վերայ անընդհատ կերպով: Բժիշկները նոյնպէս իրանց կողմից ուշք չէին դարձնում դպրոցների շինութեան հարցի վերայ և այդ հարցով, ինչպէս մենք արդէն ասացինք, պարապեցան միայն վերջին ժամանակներում, որի պատճառաւ չարիքը մնաց եթէ ոչ բոլորովին անուղղելի, գոնէ դժուար ուղղելի: Աշխարհիս մեջ երեւան ելաւ դպրոցների մի ամբողջ դասակարգ - չասենք ամբողջ դպրոցների կազմութիւնը. - որ առողջապահութեան կէտից նայելով բոլորովին անպէտք էին: Նոքա կառուցված էին երբեմն մինչ այն աստիճան անկանոն կերպով, որ մինչև անգամ անհնար էր նոցա մի որեւէ նպատակայարմար կերպով կերպարանափոխել. այլ պէտք էր քանդել բոլորովին և տեղը նորը շինել:

Մենք երկար չենք խօսիլ այն բանի վերայ, թէ ի՞նչ նիւթից պէտքէ շինուած լինի դպրոցը, թէ և օրինակի համար Պետինկօֆէրը մեծ նշանակութիւն է տալիս շինութեան նիւթին. օրովհետեւ մի որ և է նիւթ չորանում է աւելի շուտ և աւելի քիչ խոնաւութիւն է ընդունում քան ուրիշ նիւթ. մենք չենք շարունակիլ երկար խօսել այն բանի մասին, որ նոր կառուցած տունը պէտքէ նախ և առաջ լաւ չորցած լինի և ապա՝ իրրեւ դպրոցական շէնք գործադրուի. մենք չենք զբաղուիլ այն հարցով, թէ դպրոցական տները ամենից լաւ է տեղաւորել այնպիսի տեղերում, ուր չկան շրջապատոյտ այլ և այլ շինութիւններ, վաճառանոցներ, զօրաց տներ և օդէտներ: Այս բոլորը նշանաւոր բաներ են, բայց գժբաղդարար այս բաներին վերաբերեալ արդարացի պահանջները ոչ ամեն ժամանակ կարող են յարմարաւոր կերպով լրացնուիլ: Միևնոյն կերպով մենք չենք խօսիլ և դպրոցի արտաքին տեսքի վերայ:

մինչև այսօր ներկայացրած դպրոցների կազապարները (модель), ինչպես նկատում է Պարենտրապոլը, դեռ հեռու են բաւարարիչ լինելուց: Շինութեանց ճարտարապետները, որ յաճախ ստանում են վայրիվերոյ կրթութիւն և որոց թիւը շատ շատ է, դեռ մանկավարժներից և բժիշկներից էլ ստոր են այն պայմանները ըմբռնելու և հասկանելու մէջ, որք պէտքէ աչքի առաջ առնուին դպրոցի շինութիւնը կառուցանելիս: Ահա թէ ինչու համար նոցա յատակագիծներն ու նախագիծները շատ դէպքերում գերազանց են՝ որպէս նկարներ, բայց բոլորովին անպէտք են գործնականութեան մէջ: Այստեղ կը նկատենք միայն, որ դպրոցի մէջ ամենակարեւոր է մանուկների խաղերի համար մի դատարկ տեղ, և թէ այդ տարածութիւնը այնչափ մեծ պէտք է լինի, որ ամեն մի մանուկի համար բաժին ընկնի գէթ 3 քառ. մետր, որ անում է 400 աշակերտի համար 1200 մետր կամ հեկտարի $\frac{1}{3}$ մասը: Աստ եղանակի համար Հիւսիսային-Ամերիկայի դպրոցներում սկսան կառուցանել խաղի համար ստորերկրեայ դահլիճներ, որոց համար աշխատում են շինել որքան կարելի է շատ պատուհաններ և դռներ, այդ դահլիճների բարձրութիւնը 2 $\frac{1}{2}$ — 3 մետրից փոքր պէտք է չլինի, իսկ յատակը առ առաւելն գտնւում է 1 մետր խորութեամբ գետնի տակ: Դպրոցների մէջ սանդուղքները այնպէս պէտք է շինուած լինին, որ մանուկներին վտանգ չսպառնայ, որ նոքա չկարողանային ճօճուիլ սանդուղքների վանդակների վերայ, չկարողանային վանդակներից ներքև կախուիլ, և վերջապէս չջաղջախէին իրանց պարանոցը վայր ընկնելով երկրորդ կամ երրորդ յարկից: Այս հանգամանքի վերայ շատ քիչ ուշադրութիւն են դարձնում և աշխատում են շինել լայն հանդիսաւոր նախագոններ երկու կողմից սանդուղքներով և մէջ տեղը դատարկ տարածութեամբ, այսպէս որ մանուկը երկրորդ յարկում վանդակից կախուելով, յարմար կերպով կարող է դէպի վայր թռչիլ: Այս օրինակ հանդիսաւոր նախագոններ դուք կգտնէք համարեա թէ իւրաքանչիւր մեծ դպրոցում և մենք յաճախ տեսած ենք, որ դպրոցական վարչութիւնք յատուկ ծառաներ և կամ աղախիններ են նշանակում այդ տեղերի պաշտպանութեան համար, այնքան նոքա յարմար են մանուկների բարձրութիւնից վայր ընկնելուն: Բայց այս մանր արհեստական պայմաններից տուելի նշանաւոր են դասատանց ցերեկեան լուսաւորութիւնը և նոցա մեծութիւնը:

Դէպի ո՞ր կողմն պիտի նային դպրոցի դասատանց պատուհանները: Այս մասին մտածել են արդեօք այն դպրոցների կառուցանողները, որք պատահում են ձեզ իւրաքանչիւր մի քայլափոխում: Մտածել են արդեօք մանկավարժները այս մասին: Ի հարկէ ո՛չ: Այլապէս դժուար կը լինէր մեկնել, թէ ինչպէս է պատահել, որ դպրոցների պատուհանները նայում են դէպի արևելք և դէպի հարաւ, դէպի արևմուտք և դէպի հիւսիս, որ երբեմն դպրոցի մէջ պատահում են մի կարգ զուգահեռական դասատանց, որոնցից մի քանիսը նայում են դէպի հարաւ, իսկ միւսները դէպի հիւսիս: Սակայն նայեցէք թէ ինչ նշանակութիւն են տալիս այս հանգամանքին բոլոր բժիշկները:

Դպրոցական սենեակների համար պէտքէ օգտուիլ առաւօտեան արեգակով, ասումէ բժիշկներից մինը, որովհետեւ նա ամենից օգտակարն է բոլոր ուսանողների համար: Նորա ճառագայթները՝ որքան և շատ լինին, նոքա երբէք աւելորդ չեն լինիլ, և աւելի լաւ է զոհելով մի քանի յարմարութիւններ տեղաւորել դպրոցը վերին յարկում, միայն թէ չդրկել նորան արեգակից: Աոնն ասումէ, թէ սենեակի մթութիւնը իւր դրութեամբ պայմանաւորուած, աւելացնուի մանուկների մէջ կարճատեսութիւնը և թէ որքան աւելի լոյս է լինում դասատուներ, որքան աւելի լայն է լինում այն փողոցը, որտեղ դպրոցն է գտնվում, որքան աւելի ցածր են դպրոցի հանդիպակաց շինութիւնները, այնքան աւելի քիչ կարճատեսներ են երևում դպրոցի մէջ: Մենք չենք կարող հաւատ չընծայել Աօնին, որպէս մի շատ բարեխիղճ հետազօտողի, որ տեսել և զննել է շատ տասնեակ դպրոցներ: Սակայն միմիայն Աօնը չէ, որ պնդում է այդ: Գելճճը, Պապէնգէյմը, Էվէցը, Փալկը, Երաուրէն, Էրիսմանը, Փարները, Փարենտրապպը և սոցա նման հեղինակութիւն ունեցող անձինք իրանց բոլոր ուժով աշխատում են ապացուցանել դասատանց պատուհանների դէպի արեւելք կամ դէպի հարաւ դարձուցանելու կարեւորութիւնը: Բացի դրանից, պատուհանները պէտք է որքան կարելի է լայն և բարձր լինին, պատուհանների շրջանակները նեղ: Արքան աւելի մօտ են գտնվում պատուհանները առաստաղին, այնքան աւելի լաւ է: պատուհանների ստորին մասը օդուտ չի բերիլ, եթէ գրասեղաններից ցածր է ընկնում: Առհասարակ իւրաքանչիւր աշակերտի համար պէտք է ընկնի սիլեզեան ընկերութեան մանկավարժական մասի պահանջմամբ 300 քառ. Բէյնեան մատն. այսինքն մօտ 2000 ցենտիմետր պատուհան: Իսկ դօկտօր Աօնի պահանջմամբ պատուհանի տարածութիւնը հաւասար պէտքէ լինի առ նուազն 200 քառ. մատնաչափի, այսինքն ամեն մի աշակերտին բաժին պէտքէ ընկնի մօտ 1300 քառ. ցենտիմետր: Բայց մինչև անգամ այս պայմանները նկատողութեան չեն առնուել դրպրոցներում, մինչև անգամ Հիւս. Ամերիկայում: Բացի այն, որ այս պայմանները զանց էին առնվում, այլև մանկավարժները չը կարողանալով դրադիցնել աշակերտներին և երկնչելով՝ զի մի գուցէ նոքա դրադուին կողմնակի առարկաներով, հրամայում էին պատուհանների կէսը սպիտակ գուլով ներկել, որ միշտ ընդունում էր մոյգ կինամոնագոյն շոյլ, և երբեմն մինչև անգամ կանաչ գուլով, որ աւելի մթնացնում էր դասատուներ, աւելացրուսորա վերայ և այն, որ դասատան պատուհանները դէպ հիւսիս էին նայում, որ նա գտնվում էր նեղ փողոցի դիմաց, որև երբեմն շրջապատուած էր ինչում հինգ յարկանի բարձր տներով: Աւելցրէք սորա վերայ և այն, որ օրինակ մեղանում աշակերտները երբեմն ձմեռ ժամանակ ստիպուած են լինում պարապել դեռ չը լուսացած, այսինքն աշխատում են երկտեսակ լուսոյ տակ լասպտերի միջոցով և ձմեռային առաւօտեան լուսի ժամանակ, ահա թէ որքան քիչ են ի կատար ածում դպրոցները մանկավարժութեան պահանջները, որ գնահատուի լուսոյ շնորհալի ազդեցութիւնը: Դօկտօր

Կօնի հետադատութիւններից երևումէ, որ լայն փողոցների վերայ գտնուող Բրէսլաւեան նոր դպրոցներում կարճատեսները կազմում են 1,8 մինչև 6,6 տոկոս պրօցէնտ, այն ինչ նեղ փողոցների վերայ գտնուող Բրէսլաւի հին դպրոցներում կարճատեսները կազմում են 7,4 մինչև 15,1 տոկոս: Նոյնպիսի հետեւանքների է գալիս և դօկտօր Էրիսմանը, նա գրում է. . Ա. գիմնադիայում կարճատեսների թիւը շատ շատ է, չը նայելով, որ նորա դաստանց սենեակների պատուհանները ըստ մեծի մասին ունին իրանց առաջ բաւականին մեծ տարածութիւն. այս նորանով է բացատրվում, որ նորա մէջ իւրաքանչիւր աշակերտին՝ պատուհանի շատ քիչ քառակուսի ցենտիմետրների բաժին է ընկնում: Բ. գիմնադիայում, որի պատուհանները դէպի բազը կամ նեղ փողոցն են նայում, կարճատեսների թիւը քիչ է, որովհետեւ նորա մէջ ամեն մի աշակերտին պատուհանի բաւականին շատ քառակուսի ցենտիմետր բաժին է ընկնում: Գ. գիմնադիայում, չնայելով, որ ամեն մի աշակերտի պատուհանի բաւականին շատ քառ. ցենտիմետր բաժին է հանում, այնու ամենայնիւ բաւականին շատ կարճատեսներ կան, որովհետեւ համարեա նորա բոլոր դասատանց սենեակների լոյսը նշանաւոր կերպով խլվում է (վարագուրվում է) հանդիպակաց շինութեանց շնորհիւ: Դ. գիմնադիայում քիչ կարճատեսներ կան, որովհետեւ նորա մէջ իւրաքանչիւր աշակերտին՝ գալիս է պատուհանի բաւականին շատ քառ. ցենտիմետր և բացի դորանից դպրոցի հանդիպակաց շինութիւնները դասատանց սենեակների պատուհաններից բաւականին հեռու են գտնվում: Ե. գիմնադիայում, չնայելով նորա բաց դիւրքին՝ շատ կարճատեսներ կան, քան թէ Դ. գիմնադիայում, որովհետեւ նորա մէջ մէն մի աշակերտին պատուհանի քիչ քառ. ցենտիմետր բաժին է հասնում: Զ. գիմնադիայում, չընայելով որ իւրաքանչիւր աշակերտի պատուհանի շատ քառ. ցենտիմետր բաժին է ընկնում, բաւական շատ կարճատեսներ կան որովհետեւ դասատանց սենեակներից շատերը բաւարարիչ կերպով չեն լուսաւորուած: Է. գիմնադիայում համեմատաբար կարճատեսների թիւը քիչ է, որովհետեւ նորա սենեակների պատուհանները ըստ մեծի մասին նայում են բաց տարածութեան և իւրաքանչիւր աշակերտին բաժին է հասնում պատուհանի բաւականին շատ քառ. ցենտիմետր:

Այս փաստերը շատ նշանաւոր են և պէտք է գրաւեն մանկավարժների ուշադրութիւնը, սակայն լուսաւորութիւնը՝ ինչպէս մենք ասացինք, դեռ ևս ամենայն տեղ մնում է մինչև այժմ անբաւարար դրութեան մէջ:

Եթէ մենք ընդունելու լինինք, ասում է դօկտօր Էրիսմանը, — որ ամեն մի աշակերտին պէտք է բաժին հասնի պատուհանի 2000 քառ. ցենտիմետր, ինչպէս որ պահանջեց այդ սիլեզիական ընկերութեան մանկավարժական մասը, այն ժամանակ մենք կգանք այն եզրակցութեան, որ մեր հետադատած շատ սենեակներում քիչ օրական լոյս կայ: Հարիւր երեսուն և հինգ դասատանց սենեակներից 70-ը եթէ ուշք դարձնենք սիլեզիական ընկերութեան մանկավարժական մասի պահանջմանը, բաւականին վատ են լուսաւորուած: Բացի

գորանից այդ սենեակները ունին երբեմն և ուրիշ պակասութիւններ. օրինակ՝ պատուհանները նայում են դէպ հիւսիս կամ դէպի նեղ բակը, գորտ համար էլ հեշտ է երեւակայել, թէ որչափ վնաս է աշակերտների աչքերի համար կարգալ և գրել այդպիսի սենեակներում:

Քսան և մէկ դասատանց սենեակներում ամեն մի աշակերտին բաժին ընկնող պատուհանի քառ. ցենտիմետրների թիւը համապատասխանում է սիլեզեան մանկավարժական ընկերութեան պահանջներին. բայց 44 սենեակներում այդ թիւը շատ է սիլեզեան մանկավարժական ընկերութեան պահանջից: Բայց եթէ մենք ուշադրութեան առնունք այն հանգամանքը, որ ձմեռը Պետերբուրգում օրուայ մէջ 3—4 ժամ միայն կարելի է օգտուիլ օրական լուսով և թէ ըստ մեծի մասին այդ օր անուանուածը աւելի գիշերի է նմանում, այն ժամանակ մեզ համար պարզ կլինի, որ սիլեզեան մանկավարժական ընկերութեան որոշած պայմանները բաւարար չեն կարող համարուիլ այդ տեղի եղանակի համար, այդ իսկ պատճառով էլ ամեն մի աշակերտին ընկած պատուհանի քառ. ցենտիմետրների թիւը Պետերբուրգի դպրոցներում պէտքէ աւելցուն զոնէ մինչև 2500 քառ. ցենտիմետրի: Բայց երևումէ որ 97 դասատանց մէջ իւրաքանչիւր աշակերտին բաժին ընկած պատուհանների քառ. ցենտիմետրների թիւը փոքր է 2500-ից և միայն 34 սենեակներում այդ թիւը մեծ է. բայց որովհետև սոյն 34 սենեակներում տեղաւորուած են ըստ մեծի մասին բարձր դասատուները, ուր աշակերտների թիւը սակաւ է, ուրեմն գորանից չի կարելի եզրակացնել, որ սենեակները յիշաւի լուսաւորուած են, որովհետև վատ լուսաւորուած սենեակումն էլ, որի պատուհանը բազին է նայում և ինքը ուղղուած է դէպի հիւսիս, իւրաքանչիւր աշակերտին բաժին է ընկնում պատուհանի շատ քառ. ցենտիմետր, եթէ որ դասատան մէջ ընդ ամէնը 4 աշակերտ կայ:

Մի և նոյնը պատահումէ մեզ տեսնել Արէմլէվ, Աասիլեվ և Բշչերրակով բժիշկների հետազօտութեանց շնորհիւ Վաղանի գիմնազիայում: Նախ՝ որ դասատուները ուղղուած են դէպ հիւսիս-արեւելք, հարաւ արեւմուտք և հիւսիս արեւմուտք և երկրորդ՝ դասատանց մէջ ապակիային մակերեւոյթ ընկնում էր

Սենեկի մակերևութի հեղ. քառ. ցենտիմետր

Սենի — շախմատի

24,6 մատնաչափ:

246,0 մատնաչափ:

23,0

223,5

21,3

164,0

18,7

189,6

15,9

249,0

Լուսոյ բաշխման այս անհաւասարութիւնը ինքն ըստ ինքեան վատ է. սակայն բացի գորանից լուսոյ քանակութիւնը անբաւականացուցիչ է երևում, որովհետև բաւարարիչ լուսաւորութեան համար պէտք էր, վերոյիշեալ բժիշկների կարծիքով, դասատան սենեկի իւրաքանչիւր քառակուսի ոտնաչափին բաժին ընկնէր 30 քառ. մատնաչափ պատուհանի ապակիային մակե-

րեոյթ, իսկ ամեն մի աշակերտին 400 քառ: մասնաշափ պատուհանի ապակիային մակերեոյթ:

Նոյնպիսի անմխիթար հետեանքների կհասնենք մենք, եթէ հարցնելու լինինք՝ թէ լրացնում են արդեօք դպրոցները այն կարևոր պահանջը, որ լուսաւորութիւնը տրուէր ձախ կողմից կամ գոնէ հակառակ դէպքում յետևի կողմից: Աջ կողմից տրուած լուսաւորութեան վնասը գլխաւորապէս նորանումն է կայանում, որ գրութեան կամ գծագրութեան ժամանակ և ըն. գործածութեան մէջ եղած առարկան գտնվում է ստուերի տակ, որ ստացվում է աջ ձեռքից: Այստեղ, երբ աչքը ուղղվում է վատ լուսաւորուած մակերեսութի վերայ, աչքի բիրը լայնանում է՝ և պատճառ է լինում իւր մէջ ընդունելու աւելի շատ քանակութեամբ լոյս սաստիկ լուսաւորուած մակերեսութի կողմից, որով և կանոնաւոր յարաբերութիւն չի լինում լուսոյ ճառագայթների մի և նոյն տեղը հաւաքման և ծիածանի շարժողութեան մէջ: Մի և նոյն ժամանակ և վատ լուսաւորուած առարկայի վերայ նայելը պահանջում է առարկան աչքին մօտեցնել: Աւելի վնասակար է լուսաւորութիւնը այն ժամանակ երբ նա լինում է առջևից: Այն ժամանակ աչքը ենթարկվում է լուսոյ զօրեղ ազդեցութեանը, կուրութեան, որ յառաջացնում է անընդհատ սխմումն բիրի, որը և յաճախ չէ համապատասխանում առարկայի հեռաւորութեանը, ապա ուրեմն և լուսոյ ճառագայթների հաւաքմանը: Բացի դորանից սաստիկ լուսաւորուած առարկաներից հեռացրած աչքերի յանկարծակի յառելը աւելի պակաս լուսաւորութիւն ունեցող առարկաների վերայ անշափ վնասակար է: Բայց երեք գասառանց մէջ լոյսը ընկնում էր յետևից, մէկի մէջ երկու կողմերից, — աջ և ձախ կողմերից, մէկի մէջ աջ կողմից, մէկի մէջ՝ մի քանի սեղանների վերայ առջևից, իսկ միւսների վերայ յետևից: Այսինքն այս բոլորի մէջ երևում է մանկավարժների տգիտութիւնը լուսաւորութեան նշանակութիւնը չհասկանալու վերաբերութեամբ: սեղանները շարվում են ըստ յարմարութեան, բայց ոչ թէ այնպէս, ինչպէս պէտք էր նոցա շարել: Դօկտօր Էրիսմանն ասում է, որ մի դպրոցում աջ կողմից լուսաւորում են գասառանը երկու պատուհանների, միւսի մէջ մէկը լուսաւորում է աջ կողմից և 3 - ը առջևից, երրորդում 13 պատուհաններ լուսաւորում են աջ կողմից, չորրորդում՝ 9 հատ լուսաւորում են աջ կողմից, հինգերորդում՝ 2 - ը լուսաւորում են աջ կողմից, վեցերորդում 4 - ը աջ կողմից, իսկ 5 - ը առջևից, եօթներորդում 4 - ը աջ կողմից, 1 - ը առջևից, 1 - ը յետևից, ութներորդում՝ 7 - ը յետևից, իններորդում 1 - ը առջևից: Մենք պնդում ենք այս՝ ըստ երևութիւն աննշան փաստերի վերայ՝ հէնց նորա համար, որ նոցա մեծ մասի առաջը կարող էր առնուիլ մանկավարժների հետեւալ երկու խօսքերով՝ «տեղափոխեցէք սեղանները», և Բայց մանկավարժները այդ խօսքերը արտասանելու համար նեղութիւն չըկրեցին՝ գուցէ երեւակայելով՝ թէ բժիշկների բոլոր այդ պահանջները ոչ այլ ինչ են, եթէ ոչ երեւակայութեան դատարկ ցնորքներ:

Բայց եթէ որ մանկավարժները այս « շնչին » բառերին նշանակութիւն չեն տալիս, մենք խորհուրդ կտանք այն մայրերին, որոց կվիճակուի կարգալ այս տողերը, այդ « շնչին » առարկաները անպէտք չը համարեն, այլ հետեւեն, որ իրանց մանուկները գոնէ տանը աջ կողմը և կամ երեսը պատուհանին դարձրած չը պարապէին և չաշխատէին կէս լոյս և կէս մութ ժամանակ, Որովհետեւ այն պայմանները, որք վնասակար ազդեցութիւն են գործում դպրոցի մէջ, նոյն ազդեցութիւնը կարող են գործել մանուկների վերայ և տանը, իսկ մենք բոլորս էլ, մեր զաւակը տալով դպրոց ուսանելու, դադարում ենք այլ ևս նորա վերայ հոգ տանելուց և մեր առ նա ունեցած պարտքը միայն այն ժամանակն ենք մտարերում, երբ մանուկը չափից դուրս չարանում է. կամ չազափանց վատ հետքեր է բերում իւր հետ դպրոցից և կամ վերջապէս հիւանդանալով՝ բժշկի օգնութեանն է կարօտում, Ըստ մեծի մասին շատ դէպքերում մեր զաւակները իրանց դասերը պատրաստում են պնտեղ, որտեղ նոքա ցանկանում են և կամ որտեղ էլ պատահում է, մինչդեռ մենք մեր ձեռքից եկած բոլոր միջոցները չը պիտի խնայէինք, որ դպրոց գնացող մանուկը իւր դասերը տանը պատրաստելու համար, գտնէր մեղ մօտ ամենայարմար և ամենարնտիր տեղ:

(ՍԸՆԴՈՒՆԻՄԵՆՏ). (Թարգմ.) Մ. Տ. Սարգսեանց.

ԱԶԳԱՅԻՆ

4. ՊՕԼՍՈՅ ԶԱՅՆ.

— Արօնական ու Քաղաքական ժողովներն երկուշարթի խառն նիստ բրին, Այս նստին մէջ համաձայնութեամբ ընդունուեցան ու վաւերացան Արօնական ժողովոյ հետեւեալ երկու որոշմունք, Արօնական տեսչի ընտրութիւնն ու նորա 500 զրուշ ամսաթոշակն, Քահանայից պսակադրամին և հարսանեկան ուրիշ իրաւանց ուղղակի Պատրիարքարանի կողմանէ գանձուիլը, Սոյն նստին մէջ որոշուեցաւ վերստին գրել ի Տիվրիկ և պահանջել ազգային Ազգրֆներու հաշիւը, որպէս զի Ազգրֆի արդեանց գործադրութեան համար արժանն տնօրինուի, Նոյն օրը վաւերացաւ Մալաթիոյ Առաջնորդ Տ. Իսահակ եպիսկոպոսի ընտրութիւնն և Ս. Պատրիարք Հօր յանձնուեցաւ՝ պէտք եղած հրամանագիրն առնուլ Բ. Դրնէն:

— Դատաստանական խորհրդոյ երկու պակասեալ անդամաց տեղ ընտրեցան Տ. Արիստակէս քահանայ ճիղմէճեան և Յարութիւն էֆէնաի Քընտրգլեան:

Արօնական Տեսուչ նշանակեցաւ Մալաթիոյ քարոզիչ Սարաճեան Տ. Յովսէփ Ծ. Աարդապեան, իսկ այլ առարկայից՝ Պ. Սարապետ Եւթուճեան:

Հրահանգ Արօնական ժողովոյ.— Այս շարթու Պատրիարքարանէն առ մեղ զըրկուեցաւ այս վերնադրով տնտրակ մը, յորում կը տեսնուին Հրահանգ տուեալ առ համայն եկեղեցական ու ազգային պաշտօնէութիւնս որ ի մայրաքաղաքիս և ի գաւառս, և պարտաւորիչ եղանակաւ յանձնարարեալ է գործադրել զայնս յօգուտ Եկեղեցւոյ և Ազգի, և ազգ արարեալ է թէ զանցառուք պիտի պատժուին օրինաց խստութեամբ, Հրահանգ տրուած է